## Գ. Բ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ
### (Ծննդյան 75-ամյակի առթիվ)

Լրացավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Գևորգ Բագրատի Ղարիբջանյանի ծննդյան 75 և գիտամանկավարժական, հասարակական-քաղաքական գործունեության 55-ամյակը: Խոշոր է Գևորգ Ղարիբջանյանի գիտական վաստակը հայ ժողովրդի պատմության ու մշակույթի, հայ ականավոր գործիչների կյանքի ու գործունեության, ազգային-ազատագրական պայքարի ուսումնասիրության ու լուսաբանման բնագավառում: Ուսանելով ժամանակի անվանի գիտնականներ Գրիգոր Ղափանցյանի, Հրաչյա Աճառյանի, Մանուկ Աբեղյանի, Աշխարհբեկ Քալանթարի, Վահան Ռշտունու և մյուս հայանի գիտնականների մոտ, Գ. Ղարիբջանյանը ձեռք բերեց հարցախույզի և հետազոտողի համբավ: Տարիներ անց դրսևորվեց ռազմական պատմաբանի տաղանդը: Նրա գրչին են պատկանում շուրջ 70 մեծ ու փոքր պատմագիտական, գրականագիտական մենագրություններ, գրքեր, բրոշյուրներ, այդ թվում՝ «Հայաստանը և Ռուսաստանը», «Հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարը XIX դարի վերջին—XX դարի սկզբին», «Ժողովրդական հերոս Անդրանիկ», «Ուրվագծեր հայ-բուլղարական բարեկամության պատմությունից», «Հայոց ցեղասպանությունը պատմության դատաստանի առջև», «Էջեր հայ ժողովրդի պատմությունից», «Ավետիք Իսահակյան», «Հովհաննես Շիրազի հետ» և այլն: Գիտնականը հեղինակակից է նաև մի շարք կոլեկտիվ աշխատությունների, վավերագրական նյութերի ժողովածուների: Գ. Ղարիբջանյանը մասնակցել է միջազգային բազմաթիվ գիտաժողովների:



Ղարիբջանյանը հայտնի է նաև որպես գիտության կազմակերպիչ, նա արդեն տասը տարի է ինչ ղեկավարում է ՀՀ ԳԱԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնը: Հոբելյարն աչքի ընկնող ժուռնալիստ-հրապարակախոս է, ժուռնալիստների և գրողների միությունների գործուն անդամ ու հմուտ մանկավարժ:

ՀՀ ԳԱԱ նախագահությունն իր ընդլայնված նիստում նշեց Գ. Ղարիբջանյանի ծննդյան 75-ամյակը: Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Տ. Սարգսյանը: Նա նշեց գիտնականի հարուստ և բազմաբեղուն կյանքի անցած ճանապարհը: Իբրև հայրենասեր քաղաքացի, նա միշտ էլ նվիրված է եղել հայ ժողովրդի վեհ իղձերի իրագործմանը: Աշխատելով գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունում որպես պատմության և անտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ԳԱ նախագահության անդամ, Գ. Ղարիբջանյանը կատարել է զգալի գիտակազմակերպական աշխատանք: Պրեզիդենտը նշեց, որ հայրենիքը բարձր է գնահատել Գ. Ղարիբջանյանի գործունեությունը, պարգևատրելով նրան բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով: Գիտնականին բնորոշ են գիտա-

կան ճշգրտության բարձր մակարդակը, գիտակազմակերպական տաղանդը, արդարամտությունը և ճշմարտացիությունը: Վերջում մաղթեց նրան հաջողություն, արևշատություն և նորանոր հաջողություններ բազմաբեղուն և ազգանվեր գործունեության մեջ՝ ի փառս հայ ժողովրդի: Ակադեմիկոս Վ. Համբարձումյանն իր ելույթում ասաց.

— Ցանկանում եմ արտահայտել իմ ամենաանկեղծ համակրանքը Ձեր բազմամյա գիտական և հասարակական, հայրենասիրական գործունեության կապակցությամբ: Այժմ, երբ լրանում է Ձեր 75 տարին, ավելի պարզ է երևում թե որքան համապատասխանում է Ձեր գործունեությունը մեր ժողովրդի և հայկական գիտության շահերին: Ձեր մեծ եռանդը թույլ է տալիս ուղղել հասարակության ուշադրությունը դեպի գիտական, հասարակական, քաղաքական այն հարցերը, որոնք այսօր կարևոր են մեր ժողովրդի համար: Որպես Հայաստանի ազգային ակադեմիայի գիտաինֆորմացիոն կենտրոնի ղեկավար, Ձեզ հաջողվում է ժամանակին տեսնել նորը և այդ նորի հետ կապված դրական և բացասական երևույթները ճիշտ գնահատել: Ընդունեք իմ լավագույն ցանկությունները և բարեմաղթումները:

Երևանի Պետական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանն իր ելույթում ջերմորեն շնորհավորեց հոբելյարին ծննդյան առթիվ, նշեց, որ Գ. Ղարիբջանյանը գիտական ողջ կյանքի ընթացքում ծառայել է մեր ժողովրդին: Երկար տարիներ դասախոսական բեղմնավոր աշխատանք կատարելով մայր բուհում, որի լավագույն սաներից մեկն էլ գիտնականն է եղել, երբեք չի խզել իր կապը նրա հետ և որտեղ էլ աշխատել է, բարձր է պահել համալսարանականի իր կոչումը:

Գրականության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանն իր ողջույնի խոսքում Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ողջ գիտական անձնակազմի անունից ջերմորեն շնորհավորելով վաստակաշատ գիտնականին նշեց. Մենք՝ գրականագետներս, հատուկ սիրով ենք նշում Ձեր հոբելյանը նաև այն պատճառով, որ Ձեր մեջ տեսնում ենք մասնագիտորեն մեզ շատ մոտ կանգնած գործընկերոջ: Մեծարգո Գևորգ Ղարիբջանյան. Ձեր, իբրև գիտնականի և մարդու համար, շատ բնորոշ է հավատարմությունը դավանած գաղափարներին, քաղաքական և բարոյական այն սկզբունքներին, որոնց դրոշի ներքո դուք գործել եք տասնամյակներ շարունակ: Դուք հավատարիմ մնացիք Ձեր որդեգրած սկզբունքներին: Հատկապես բարձր ենք գնահատում Ձեր հետևողականությունը հայ-ռուսական հարաբերությունների ամրապնդման գործում՝ ի հակակշիռ բոլոր այն ուժերի, որոնք ցանկանում են սեպ խրել մեր երկու ժողովուրդների միջև և հայ ժողովրդին թողնել անզեն՝ թուրքական մահացու սպառնալիքի հանդեպ: Լինելով Հայրենական մեծ պատերազմի մասնակից և վետերան, Դուք սրբությամբ եք պահպանում պատերազմում զոհվածների հիշատակը, հայ ժողովրդի զավակների մարտական սխրանքների կենդանի հիշողությունը, որոնց դուք բազմիցս անդրադարձել եք նաև Ձեր գիտական-հրապարակախոսական ելույթներում:

Նիստի անդամները մեծ հետաքրքրությամբ ունկնդրեցին նաև ՀՀ «Գիտելիք» գիտալուսավորական ասոցիացիայի նախագահության և հիմնադիր անդամների կողմից հղված շնորհավորանքները, ուր ասված է. Դուք, լինելով «Գիտելիք» ընկերության հիմնադիր անդամ, շուրջ 50 տարի անընդմեջ աշխատելով ՀՀ ԳԱԱ պատվավոր պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանի հետ որպես ընկերության առաջին փոխնախագահ, ազգանպաստ հասարակական մեծ գործունեություն եք ծավալել հանրապետությունում և նրա սահմաններից դուրս: Դրա փայլուն վկայությունն է համաշխարհային հռչակ ունեցող գիտնական Վավիլովի անունը կրող Համամիութենական «Գիտելիք»-ի բարձրագույն պարգևին արժանանալը:

Ջերմ էր ՀՀ ԳԱԱ Հիմնական գիտական գրադարանի տնօրեն Վ. Ս. Նալբանդյանի խոսքը: Նա գրադարանի ողջ կոլեկտիվի անունից ողջունեց հոբելյարին, նշեց, որ առանձնապես նշանակալի է գիտնականի վաստակը Հայաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժումների, ազգային հարցի, հայ ազատագրական պայքարի, հայ և ռուս ժողովուրդների պատմական կապերի հանգուցային պրոբլեմների ուսումնասիրման գործում:

Շնորհավորանքի խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ն. Հովհաննիսյանը: Դիմելով հոբելյարին նա ասաց. Հարգելի Գևորգ Բագրատի, ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական աշխատակիցները, օգտվելով այս հաճելի առիթից իրենց գնահատանքի խոսքն են ուղղում և ջերմորեն շնորհավորում Ձեզ Ձեր ծննդյան 75-ամյակի կապակցությամբ: Դուք անցել եք կյանքի մեծ ուղի և կուտակել հարուստ կենսափորձ, որը ուսանելի շատ կողմեր ունի: Ձեր բեղմնավոր գրչի տակից դուրս են եկել բազմաթիվ արժեքավոր մենագրություններ և գիտական հոդվածներ: Նորը տեսնելու Ձեր հմտության, համար-

ծակության, գիտական և ազգային կարևոր հիմնահարցերի նկատմամբ քաղաքացիական ակտիվ դիրքորոշման և վերջապես Ձեր հիրավի երիտասարդական ավյունի ու եռանդի շնորհիվ Դուք միշտ կանգնած եք եղել և այսօր էլ կանգնած եք մեր հասարակական գործիչների առաջին շարքերում:

Պատմության ինստիտուտի պրոֆեսոր Հ. Պողոսյանը ինստիտուտի գիտական կոլեկտիվի անունից ջերմորեն շնորհավորելով Գ. Ղարիբջանյանին, նշեց գիտնականի ներդրած մեծ ավանդը գիտության ասպարեզում, մաղթեց գիտնականին հաջողություն և բազում տարիների ազգանվեր գործունեություն:

Հրապարակելով Հայաստանի գրողների միության վարչության ողջույնը արձակագիր Ժիրայր Ավետիսյանն ասաց. Մեծարգո բարեկամ, ընդամենը մեկ տասնամյակից քիչ ավելի է բաժանում մեր սերնդին Ձեր սերնդից, բայց մեզանից շատերը, եթե ոչ բոլորը, իրենց ստեղծագործություններում կրել են Ձեր պատմագիտական ու գրականագիտական երկերի ազդեցությունը: Մենք, ինչպես և Ձեր բազմաթիվ ուսանողներն ու հազարավոր ընթերցողները, ձեզանից առել ենք հայրենասիրության, սկզբունքայնության և աշխատասիրության դասեր:

Արտասահմանյան երկրների հետ գիտական կապերի համագործակցության ընկերության համանախագահ, պատմական գիտությունների թեկնածու Լ. Րարսեղյանը, ընկերությունում կատարած երկարատև և բեղմնավոր աշխատանքի համար, Գ. Ղարիբջանյանին հանձնեց ընկերության պատվոգիր:

ՀՀ խորհրդարանի պատգամավոր Ռ. Մխիթարյանը խոսեց Գ. Ղարիբջանյանի հասարական գործունեության մասին:

Հուզիչ էր գիտնականի համալսարանական ընկեր, բանասիրական գիտ. դոկտոր Գևորգ Աբգարյանի ելույթը, որը պատմեց, թե ինչպես Ղարիբջանյանի ընտանիքը մշտապես հոգատարություն է ցուցաբերել իր նկատմամբ, նույնիսկ հետպատերազմյան այն տարիներին, երբ ինքը անհիմն կերպով կրել է «Դավաճանի» մեղադրանք և աքսորված եղել Սիբիր: Հոբելյարին ողջունեց նաև Պետական Համալսարանի 3-րդ կուրսի ուսանողուհի Ռ. Հակոբյանը:

Հ. ՇԱՀԲԱԶՅԱՆ